ՀՏԴ 070.14
Լրագրություն

Անուշ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
ԱրՊՀ, գրականության և լրագրության ամբիոն, ասիստենտ

ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ (ԱՊՐԻԼՅԱՆ ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ապրիլյան ռազմագործողությունների համատեքստում կատարված ուսումնասիրությունների հիման վրա հոդվածում հատկանշվում է մամուլի ծառայությունների դերը՝ որպես պետության տեղեկատվական քաղաքականության գործիք: Կոնտենտ-վերլուծության մեթոդով միաժամանակ վեր են հանվում ռազմագործողությունների վերսկսման, կենդանի ուժի ու զինտեխնիկայի կորստյան, տարածքների գրավման, կրակի դադարեցման վերաբերյալ կողմերի մամուլի հաղորդագրությունների որակական և քանակական ցուցանիշներն ու դրանց հարաբերակցությունը:

Բանալի բառեր՝ *տեղեկատվական քաղաքականություն, մամուլի ծառայություն, մամուլի հաղորդագրություն, Ապրիլյան ռազմագործողություններ, տեղեկատվական պատերազմ:*

А. Долуханян

ПРЕСС СЛУЖБА КАК МЕТОД ИНФОРМАЦИОННОЙ ПОЛИТИКИ ГОСУДАРСТВА (НА ПРИМЕРЕ АПРЕЛЬСКИХ ВОЕННЫХ ДЕЙСТВИЙ)

Основываясь на исследованиях, проведенных в контексте апрельских боевых действий, статья подчеркивает особенную роль пресс-служб как инструмента информационной политики в государстве. Методом контент-анализа одновременно повышаются качественные и количественные показатели сообщений СМИ о возобновлении военных действий, потере жизненной силы и техники, оккупации территорий, прекращении огня и их соотношения.

Ключевые слова: *информационная политика, пресс-служба, пресс-релиз, апрельские военные действия, информационная война.*

A. Dolukhanyan

MEDIA SERVICE AS A METHOD OF INFORMATION POLICY OF THE STATE (ON THE EXAMPLE OF APRIL MILITARY ACTIONS)

Based on studies conducted in the context of the April military actions, the article emphasizes the special role of press services as an instrument of information policy in the country. The content analysis method simultaneously improves the qualitative and quantitative indicators of media reports on the resumption of military operations, human and equipment losses, occupation of territories, ceasefire and their relationship.

Key words: *information policy, press service, press release, April military actions, information war.*

XX դարավերջը նշանավորվեց տեղեկատվական գործընթացների գլոբալիզացմամբ և տեղեկատվության հոսքի՝ որպես լսարանի վրա ունեցած ազդեցության ընդլայնմամբ. գործոններ, որոնք հիմք են տալիս համոզվելու, որ արդյունաբերական հասարակությանն այլևս փոխարինելու է եկել տեղեկատվական հասարակությունը՝ առաջնահերթություն տալով զանգվածային հաղորդակցությանը:

Գերմանացի փիլիսոփա Օ. Շպենգլերը դեռևս նախորդ դարասկզբին կանխատեսում էր տեղեկատվության դերակատարության աննախադեպ աճ: «Եվրոպայի մայրամուտը» աշխատության մեջ Շպենգլերն առաջ քաշեց այն գաղափարը, թե «մոտ ապագայում մամուլը կուղղորդի ժողովրդի կամքը»[1] : Ընդգծենք սակայն, որ Շպենգլերն իր ուսումնասիրության մեջ չէր կանխատեսել առցանց ԶԼՄ-ների կայծակնային զարգացումն ու տարածումը, հակառակ դեպքում՝ նրա կանխատեսումներն առավել ստուգահավատ կլինեին. չէ՞ որ վերջիններս, իբրև կառավարման համակարգի սուբյեկտ, իրենց վերապահված գործառույթով կոչված են բավարարելու ինչպես առանձին անհատների, այնպես էլ սոցիալական խմբերի տեղեկատվական հետաքրքրություններն ու պանաջները: Այսինքն՝ ԶԼՄ-ները հանդես են գալիս որպես պետության տեղեկատվական քաղաքականության իրացման արդյունավետ գործիք և միջոց: Պետության տեղեկատվական քաղաքականության տեսության, բովանդակության, գործիքակազմի և այլնի վերաբերյալ տեսաբանները առաջ են քաշում տարբեր կարծիքներ, որոնցից իրականությունն առավելապես արտացոլում է Վ. Պոպովի կարծիքը. «Պետության տեղեկատվական քաղաքականությունը քաղաքական, իրավական, տնտեսական, սոցիալ-մշակութային և կազմակերպական միջոցառումների համալիր է՝ ուղղված քաղաքացիների՝ տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքի իրացմանը: Տեղեկատվական քաղաքականությունը մարդկանց

---

[1] ***Шпенглер О.,*** *Закат Европы, том 2, М. 1998, стр. 143.*

գործունեության հատուկ ոլորտ է, որ կապված է տեղեկատվության վերարտադրողականության և տարածման, պետության և քաղաքացիական հասարակության հետաքրքրությունների բավարարման հետ՝ ուղղված նրանց և նրանց ներկայացուցիչների ստեղծագործական, կառուցողական երկխոսությանը»[1]:

Չկարգավորված հակամարտության պայմաններում ապրող Արցախը մոտ երեք տասնամյակ տեղեկատվական մշտական պատերազմի մեջ է հակամարտության մյուս կողմի՝ Ադրբեջանի հետ: Տեղեկատվական պատերազմը, որ արժեքների, վարքագծի և մտածողության այլափոխման, դիմադրության մեխանիզմների խաթարման նպատակ ունի, լայն իմաստով մոտ է հոգեբանական պատերազմներին (ապատեղեկատվություն և քարոզչություն) և կիբեռպատերազմներին (հաղորդակցական խողովակների ներգործություն): Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ մեր հանրապետությունը հասարակական գիտակցության ձևավորման տեղեկատվական քաղաքականության իրացման և կարգավորման մեխանիզմներ իրավական փաստաթղթի տեսքով չի ներդրել, ինչը, բնականաբար, լուրջ բաց է հակամարտող երկրի դեպքում: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ տեղեկատվական քաղաքականության և դրանից բխող նորմատիվ-իրավական այլ ակտերի առկայությունը կարող է ոչ միայն օրենսդրորեն կարգավորել դաշտը, այլև հանդես գալ իբրև գործողությունների քարտեզ:

Ռազմականին զուգահեռ՝ տեղեկատվական էսկալացիային դիմակայելու փորձեր Արցախն արեց 2016 թվականի ապրիլին, երբ տեղեկատվական պատերազմի դրսևորումները գագաթնակետին հասան «Ապրիլյան քառօրյա պատերազմ» անվանումը ստացած ռազմագործողությունների[2] և դրան հաջորդած օրերին սահմանին ընթացող զինված բախումներին զուգահեռ ծավալված տեղեկատվական գրոհների ընթացքում: Այս առումով զանգվածներին ուղղորդելու հարցում առանձնահատուկ նշանակություն ունի հատկապես նոր մեդիան:

Հետազոտության թիրախ ընտրելով 2016 թվականի ապրիլի 2-6-ն ընկած ժամանակահատվածում հակամարտող կողմերի մամուլի ծառայությունների աշխատանքի հետագիծը՝ նպատակ ունենք ներկայացնելու կողմերի պաշտոնական հրապարակումների քանակն ու որակը և դրա՝ որպես պետության տեղեկատվական քաղաքականության իրացման միջոց լինելը: Այսպիսի ընտրությունը պայմանավորվում և հիմնավորվում է նրանով, որ ավանդական լրատվական ռեսուրսները վաղուց զիջել են իրենց դիրքերը էլեկտրոնային ռեսուրսներին, և լայն հանրությունը սեփական հետաքրքրությունները բավարարելու համար

---

[1] ***Попов В.Д.,*** *Информациология и информационная политика. М.: Изд-во РАГС, 2001, стр. 68:*

[2] *http://nkrmil.am/news/view/198*

նախընտրում է դիմել համացանցին: Միջանկյալ նկատենք, որ այսպիսի իրողությունը պայմանավորված է մի կողմից՝ առաջարկով (հեռահաղորդակցության ընձեռած հնարավորությամբ), մյուս կողմից՝ պահանջարկով (հանրային գիտակցությամբ):

Չնայած հանրության տեղեկատվական պահանջմունքները բավարարելու քաղաքականությունը՝ ԱՀ ՊՆ-ն իրացնում էր առավելապես մամուլի հաղորդագրությունների ձևաչափով՝ հանրությունը պարբերաբար իրազեկելով շփման գծում հակառակորդի ագրեսիվ քաղաքականության[1] և այլնի մասին, ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը սանձազերծված գործողությունները, այնուամենայնիվ, անակնկալ էին իրենց ծավալով և բնույթով, ինչն ընդգծվեց նաև կողմերի լրատվության որակային և քանակային ցուցիչներով:

Ռազմական գործողությունների մասին պաշտոնական առաջին հաղորդագրությունը (02.04.2016թ., տեղական ժամանակով 8:18-ին) տարածեց ԱՀ ՊՆ մամուլի ծառայությունը՝ նշելով ադրբեջանական կողմի նախահարձակ լինելու մասին: «Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը շփման գծի հարավային, հարավարևելյան և հյուսիսարևելյան ուղղություններով հակառակորդը ձեռնարկել է բացահայտ հարձակողական գործողություններ՝ այլ զինատեսակների հետ միասին օգտագործելով հրետանի, զրահատեխնիկա և օդուժ: Բացի առաջնագծում ընթացող մարտերից՝ հակառակորդը հրետանային հարվածներ է հասցրել խաղաղ բնակավայրերի և մի շարք զորամասերի մշտական տեղակայման վայրերին: Այս պահի դրությամբ ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկարությամբ տեղի են ունենում թեժ բախումներ: ՊԲ առաջապահ ստորաբաժանումները, ընդունելով հակառակորդի մարտահրավերը, վարում են հուսալի պաշտպանական մարտեր»[2],- գրում է ՊՆ-ն՝ խոստանալով առաջնագծում ստեղծված իրադրության մասին առավել մանրամասն անդրադառնալ առաջիկա հաղորդագրություններում (ավելի ուշ հայկական լրատվամիջոցներում հայտնվում է նաև ադրբեջանական կողմի նախահարձակ լինելն ապացուցող մուլտիմեդիա նյութեր[3]):

Վերոնշյալ երկու տեղեկությունները շարունակում էին «պայթեցնել» հայկական մեդիատիրույթը, երբ ԱՀ ՊՆ-ն հրապարակեց հակամարտ զորքերի շփման գծում տիրող իրավիճակը ներկայացնող երկրորդ հաղորդագրությունը (տեղական ժամանակով 9:10-ին)՝ պաշտոնական դիքորոշում հայտնելով ադրբեջանական կողմի նախահարձակ

---

[1] *Տես՝ 2016թ. հունվար-մարտ ամիսներին ՊԲ դիրքերի ուղղությամբ ադրբեջանական կողմի կրակոցների քանակը՝ ըստ շաբաթների (https://razm.info/99426)*

[2] *http://nkrmil.am/news/view/198*

[3] *https://www.youtube.com/watch?v=Q08akW7zAok*

գործողությունների, ՊԲ առաջապահ ստորաբաժանումների գործողությունների և հատկապես շփման գոտու հյուսիսային հատվածում հայկական դիրքերի ուղղությամբ գրոհող թշնամական մեկ ուղղաթիռի խոցման մասին[1]. Ադրբեջանական քարոզչամեքենան շարունակում էր «լռել»:

Հայկական կողմի առաջին հաղորդագրությունից ավելի քան մեկուկես ժամ հետո՝ տեղական ժամանակով 10:44-ին, սահմանային լարվածությանն արձագանքեց ադրբեջանական ագիտպրոպի ամենացայտուն գործիքներից Haqqin.az-ը՝ հրապարակելով «Ադրբեջանի ՊՆ-ն Ղարաբաղում ընթացող թեժ մարտերի մասին»[2] հոդվածը, որտեղ, Ադրբեջանի հակակայկական քաղաքականության ոգուն համապատասխան, հայտարարվեց հայկական կողմի նախահարձակ լինելու մասին. «Ադրբեջանական բանակի առաջապահ ստորաբաժանումները մի քանի ուղղություններով (Աղդամ, Ֆիզուլի, Թերթեր, Խոջավենդ) իրականացնում են կոորդինացված պատասխան գործողություններ հայկական օկուպանտների դեմ»[3]: Նույն հոդվածում տեղ գտավ նաև լրատվամիջոցներին ուղղված խնդրանք-հորդոր՝ շրջանառության մեջ չդնել ոչ պաշտոնական, ոչ օբյեկտիվ չճշտված տեղեկատվություն: Այսինքն՝ ադրբեջանական կողմը մեկնաբանեց մի բան, որի մասին պաշտոնական կամ ոչ պաշտոնական մակարդակներում որևէ անդրադարձ նախքան այդ չենք հանդիպում: Մի քանի րոպեի տարբերությամբ նույնաբովանդակ տեղեկատվություն տարածվեց ոչ միայն ԶԼՄ-ների պաշտոնական էջերում, այլև սոցիալական ցանցերում:

Հետագայում պաշտոնական Ադրբեջանը օգտագործեց պատեհ և անպատեհ բոլոր առիթները՝սահմանային լարվածության ողջ պատասխանատվությունը գցելով հայկական կողմի վրա[4], իսկ ավելի ուշ հայտարարեց որ հայկական կողմը, նախահարձակ լինելը վերագրելով ադրբեջանական կողմին՝ սեփական ժողովրդին դարձնում սեփական հետաքրքրությունների գերին: «Սակայն այլ բան է խաբել սեփական ժողովրդին, այլ բան է ցինիկաբար մոլորեցնել միջազգային հանրությանը»,- հարցազրույցներից մեկում հայտարարել էր Ադրբեջանի նախագահի օգնական Վահիդ Ալիևը[5]:

Ի պատասխան, թե ի հերքումն ԱՀ ՊՆ՝ հայ հակաօդայինների կողմից ադրբեջանական ուղղաթիռի խոցման մասին 02.04.2016թ. ժամը 9:10-ի հաղորդագրության՝ 10:45-ին հանդես եկավ Trend.az-ը՝ «Ադրբեջանի ՊՆ-ն ուղղաթիռի ոչնչացման մասին լուրը որպես սուտ է որակել»[6] հոդվածով, և

---

[1] *http://nkrmil.am/news/view/197*
[2] *https://haqqin.az/news/67139*
[3] *https://haqqin.az/news/67139*
[4] *https://www.trend.az/azerbaijan/karabakh/2514283.html*
[5] *https://www.trend.az/azerbaijan/karabakh/2514268.html*
[6] *https://www.trend.az/azerbaijan/karabakh/2513531.html*

դա այն դեպքում, երբ լրատվամիջոցը հակամարտ զորքերի շփման գծում տեղի ունեցող գործողությունները դիվերսիա որակմամբ մեկնաբանեց միայն կեսօրն անց. «Հակամարը զորքերի շփման գծում իբր թե Ադրբեջանի ԶՈՒ-ին պատկանող խոցված ուղղաթիռի մասին լուրը ապատեղեկատվություն է»[1]: 10:57-ին Vesti.az-ում հայտնված «Հայերին թվացել է, թե ադրբեջանական ուղղաթիռ են խոցել»[2] վերնագրով հոդվածում Իսմայիլ Ալիևը իրեն բնորոշ ցինիզմով գրեց, թե հայկական կողմը միայն երազում կամ համակարգչային խաղերում կարող է ադրբեջանական ուղղաթիռ խոցել. «Հայերը կրկին դերի մեջ են մտել: Ստում են և գողանում: Նրանց մոտ անգամ ստելը չի ստացվում: Երեկ նրանք երազախաբության մեջ էին, երբ հայտարարեցին, թե ուղղաթիռ են խոցել», ապա հղում անելով Ադրբեջանի ՊՆ հաղորդագրությանը՝ շարունակում. «Ադրբեջանի ԶՈՒ-ին պատկանող ուղղաթիռի խոցման մասին տեղեկությունը ամբարտավան և ցինիկ հայտարարություն է: Տեխնիկական և ավիացիոն բոլոր միջոցները տեղում են, և դա հայկական կողմի հերթական սադրանքն է»[3].

Ադրբեջանի ՊՆ կողմից ադրբեջանական ուղղաթիռի խոցման հերքումը ևս վայրկենապես տարածվեց ադրբեջանական մեդիայում՝ նյութին կից ներկայացնելով նոր միֆեր առաջնագծում ադրբեջանական կողմի «սխրագործությունների» և «հայկական կրիմինալ ռեժմի ղեկավարությամբ նահանջող և բարոյալքված» հայ զինվորի և սպայի մասին. տեղեկություններ, որոնցով տևական ժամանակ սնվեց ադրբեջանական հանրությունը:

Այն բանից հետո, երբ հայկական կողմը հայտարարեց (ժամը 11:35-ին) ադրբեջանական զինուժի կողմից հայկական պաշտպանական դիրքերի և խաղաղ բնակավայրերի հրթիռահրետանային արկակոծման և դրա հետևանքով խաղաղ բնակչության շրջանում զոհերի և վիրավորների մասին (ըստ ՊԲ օպերատիվ տվյալների, ադրբեջանական զինուժի կողմից ապրիլի 2-ին ժամը 08:30-ի սահմաններում Մարտունու պաշտպանական ուղղությամբ ՄՄ-21 («Գրադ») կայանքից իրականացված հրթիռահրետակոծության հետևանքով սպանվել է 2004թ. ծնված Վ.Թ.Գրիգորյանը, ևս երկու երեխա վիրավորվել են[4]), ադրբեջանական լրահոսը հայտարարեց սեփական երկրի խաղաղ բնակիչների կորստյան մասին. հայկական կողմի հրետակոծության արդյունքում մեկ զոհի և մեկ

---

[1] *https://www.trend.az/azerbaijan/karabakh/2513537.html*

[2] *http://www.vesti.az/armiya/armyanam-pokazalos-chto-oni-sbili-azerbajdzhanskij-vertolet-obnovleno-287827*

[3] *http://www.vesti.az/armiya/armyanam-pokazalos-chto-oni-sbili-azerbajdzhanskij-vertolet-obnovleno-287827*

[4] *http://nkrmil.am/news/view/196*

վիրավորի մասին գրեց Vesti.az-ը[1]: Այս օրերին, ադրբեջանական մամուլի հիմնական լեյտմոտիվին զուգահեռ, շրջանառության մեջ դրեց հայկական կողմի՝ ադրբեջանական խաղաղ բնակավայրերը հրետակոծելու դրույթները՝ նախ՝ գրելով, թե հրետակոծության է ենթարկվել Աղդամի շրջանը, ապա նույն շրջանի երեք գյուղերը, որից հետո էլ՝ Աղդամի մզկիթը, որի արդյունքում Ադրբեջանը զոհեր է կրել նաև խաղաղ բնակչության շրջանում[2]:

Ադրբեջանական կողմի «աննշան» կորուստների չափերն ու ծավալները վերահաստատելու միտմամբ Haqqin.az-ը «Հայաստանի ՊՆ-ն սահմանին կրած կորուստների մասին» հրապարակմամբ վկայակոչում է ՀՀ ՊՆ մամլո խոսնակ Արծրուն Հովհաննիսյանի ֆեյսբուքյան «Մարտական գործողությունների ընթացքում ադրնեջանական բանակը կորցրել է 1 ԱԹՍ և 1 տանկ» գրառումը, ապա ավելացնում. «Նախքան այս Ա. Հովհաննիսյանը հաղորդել է Ադրբեջանի ԶՈՒ-ի իբր թե խոցված ուղղաթիռի մասին»[3]: Հետաքրքրիր է, եթե ադրբեջանական մամուլը իբրև արժանահավատ աղբյուր է օգտագործում ՀՀ ՊՆ մամլո խոսնակի՝ սոցիալական ցանցերում կատարված գրառումները, ապա ինչու՞ միայն այնպիսիք, որոնք բխում են սեփական քարոզչության սկզբունքներից:

«Խոցված են հակառակորդի 6 տանկ, 15 հրետանային սարքավորում, ոչնչացված է ավելի քան 100 զինվոր»[4],- Vesti.az-ի ներկայացրած թվական տվյալների հրապարակումից շատ չանցած ԱՀ ՊՆ-ն հայտնում է ադրբեջանական կողմի նոր կորուստների մասին. «Ծավալված մարտական գործողությունների ընթացքում պաշտպանության բանակի կողմից հյուսիսարևելյան ուղղությամբ ոչնչացվել է ևս 1 տանկ, հյուսիսային ուղղությամբ՝ ՄՄ-21 («Գրադ») տիպի 1 հրթիռահրետանային կայանք, 1 միավոր ինժեներականտեխնիկա և 1 միավոր անօդաչու թռչող սարք՝ Մարտակերտի ուղղությամբ»[5] (այս տեղեկությունն ավելի ուշ հերքվում է Ադրբեջանի ՊՆ կողմից):

Արցախա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծում իրադրության մասին ԱՀ ՊՆ-ն հանդես է գալիս մասնավորեցնող տեղեկատվությամբ՝ նշելով, որ ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը և օրվա ընթացքում տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում ադրբեջանական զինուժը տվել է 200-ից ավելի կորուստ. «Միայն Թալիշի ուղղությամբ ոչնչացվել է ադրբեջանական հատուկ նշանակության

---

[1] *http://www.vesti.az/armiya/v-rezultate-artillerijskogo-ognya-s-armyanskoj-storony-pogib-zhitel-azerbajdzhanskogo-sela-287831*

[2] *https://www.trend.az/azerbaijan/society/2514656.html*

[3] *https://haqqin.az/news/67148*

[4] *http://www.vesti.az/armiya/azerbajdzhanskaya-armiya-osvobodila-ot-okkupantov-neskolko-naselennykh-punktov-obnovleno-287869*

[5] *http://nkrmil.am/news/view/187*

ջոկատի առնվազն 30 զինվոր, Մարտակերտի ուղղությամբ՝ 2 տանկ, 2 ԱԹՍ, իսկ հյուսիսային ուղղությամբ՝ 1 ուղղաթիռ: Առավել խոշոր բախումներ են տեղի ունենում մարտագծի հարավարևելյան ուղղությամբ: Հակառակորդը, կիրառելով զրահատեխնիկա, հրետանային միջոցներ, այդ թվում՝ ՄՄ-21 («Գրադ») տիպի կայանք, հարձակման թիրախ է դարձրել ոչ միայն պաշտպանության բանակի դիրքերը, այլև խորը թիկունքում գտնվող խաղաղ բնակավայրերը: Այս ուղղությամբ ՊԲ հակաօդայինների կողմից ժամը 12:30-ի սահմաններում խոցվել է թշնամական մեկ ռազմական ուղղաթիռ և 2 տանկ»[1]: Ի լրումն ասվածի՝ ԱՀ ՊՆ-ն հրապարակում է նաև տեսալուսանկարահանված նյութեր (Ադրբեջանի կենդանի ուժի կորուստները (ֆոտո)[2], ՊԲ հակաօդայինների կողմից խոցված ադրբեջանական ՄԻ-24 ուղղաթիռը (տեսանյութ, ֆոտո)[3]: Նույն հաղորդագրության մեջ պաշտոնապես ասվում է նաև արցախյան կողմի կորուստների մասին:

Ի տարբերություն առաջին ուղղաթիռի՝ Ադրբեջանի ՊՆ-ն երկրորդ ուղղաթիռի խոցումն, այնուամենայնիվ, ընդունում է: Հայկական կողմի տարածած հաղորդագրությունից քիչ անց՝ Ադրբեջանը պաշտոնապես հայտնում է, որ մարտական գործողությունների ընթացքում կորցրել է 12 զինվոր, 1 ուղղաթիռ և 1 տանկ[4]: Ադրբեջանի դիվերսիոն-հետախուզական խմբի սպանված զինծառայողների և ոչնչացված զինտեխնիկայի՝ այդ թվում ԱԹՍ-ի մասին տեսանյութ է հրապարակում ԱՀ ՊՆ-ն[5]: Նույն ժամանակահատվածում հայկական կողմը տարածում է «Ադրբեջանի ԶՈՒ հայտնի դարձած կորուստները գերազանցում են պաշտոնական թիվը». հրապարակումը, որտեղ հակառակորդի կորուստների՝ կենդանի ուժի և զինտեխնիկայի քանակական տվյալները հիմնավորված էին մասնավորապես սոցիալական ցանցերում ադրբեջանցի օգտատերերի գրառումներով և փաստերով[6]: Սրան հաջորդում է պաշտոնական մեկնաբանությունը. «Ըստ պաշտոնական Բաքվի՝ 21-ը հավասար է 12-ի: Բանից պարզվում է, որ Ադրբեջանի ՊՆ-ն սեփական կորուստները թաքցնելու համար դիմում է պարզունակ հնարքի՝ փոխում է թվերի տեղերը և միայն մեկ մարտում ունեցած 21 զոհը ներկայացնում որպես 12»[7]: Ի դեպ, հաղորդագրությանը կցված տեսագրության մեջ կլոր շրջանակի մեջ պատկերված են այն սպանված ադրբեջանցիների դիակները, ովքեր իբրև թե գրավել են Սեյսուլանը: Այնինչ «Սեյսուլանը ինչպես եղել է հայկական,

---

[1] *http://nkrmil.am/news/view/194*
[2] *http://nkrmil.am/news/view/193*
[3] *http://nkrmil.am/news/view/192*
[4] *https://haqqin.az/news/67171*
[5] *https://www.youtube.com/watch?time_continue=8&v=GLE1ohdFvbM*
[6] *https://razm.info/81599*
[7] *http://nkrmil.am/news/view/186*

այնպես էլ մնում է հայկական…»[1]: (խոսքը վաղուց լքված Սեյսուլան բնակատեղիի մասին է, այլ ոչ թե Նոր Սեյսուլան բնակատեղիի, որը գտնվում է հայկական տարածքների խորքում՝ Մարտակերտի շրջանում, որն իրենց վերահսկողության տակ առնելու մասին հայտնել էին ադրբեջանական ԶԼՄ-ները՝ տեքստին կցելով վերոնշյալ Նոր Սեյսուլան գյուղից լուսանկարներ):

Ժամեր անց պաշտոնական Բաքուն հերքեց է հայկական կողմի «հերթական սուտը»: «Ղարաբաղում զոհված ադրբեջանցի 21 զինվորների մասին լուրը, որ տարածում է հայկական կողմը, ցանկալին իրականության փոխարեն ներկայացնելու փորձ է»,- հայտարարեց Ադրբեջանի ՊՆ մամլո ծառայության ղեկավար Վ. Դարգյախլին[2]:

Ապրիլի 2-ի երեկոյան հրավիրված Ազգային անվտանգության խորհրդի նիստի ժամանակ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, քննարկելով Ադրբեջանի կողմից 1994թ. զինադադարի համաձայնագրի կոպիտ խախտման և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ լայնածավալ հարձակման արդյունքում ստեղծված իրավիճակը, հայտարարում է հայկական կողմի կորուստները. 18 զոհ և ավելի քան 35 վիրավոր, քաղաքացիական անձանցից 1 զոհ և վիրավորներ, այդ թվում՝ 2 երեխա[3]:

Հայկական կողմի կորուստների մասին պաշտոնական այս հայտարարությանը հետևում է Haqqin.az-ի՝ «Ղարաբաղի ազատագրման համար» մղված մարտերում զոհված մի քանի զինվորների մասին հաղորդումը[4]: Տևական ժամանակ զերծ մնալով սեփական կորուստների մասին աննշան տեղեկություններ հաղորդելուց՝ ադրբեջանական պաշտոնական մամուլը պարբերաբար հրապարակում էր տվյալներ հայկական կողմի կորուստների մասին՝ «Տարածված տեսանյութերում տեսնելի են ադրբեջանական զորամիավորումների կողմից ազատագրված տարածքներ, խոցված տանկեր: Ընդհանուր առմամբ այդ ուղղությամբ շարքից հանվել են թշնամական մի քանի Т-72 տանկեր ՄՄՀ»[5], «ադրբեջանական զորամիավորումները ոչնչացրել են հայկական ԶՈՒ ԱԹՍ»[6] և այլն:

Ապրիլի 4-ի վաղ առավոտյան հակամարտության կողմերը գրեցին շփման գծում շարունակվող թեժ մարտերի մասին՝ պաշտոնական հաղորդագրություններում անդրադառնալով միմյանց կորուստներին: «Ռազմական գործողությունների ընթացքում հակառակորդը

---

[1] *http://nkrmil.am/news/view/186*

[2] *https://haqqin.az/news/67262*

[3] *https://artsakhpress.am/arm/news/41635/na-danniyiy-moment-u-nas-18-pogibshikh-i-okolo-35-raneniykh-%E2%80%93-serzh-sargsyan.html*

[4] *https://haqqin.az/news/67182*

[5] *https://haqqin.az/news/67239*

[6] *https://haqqin.az/news/67246*

հյուսիսարևելյան ուղղությամբ կորցրել է 3 տանկ, իսկ հարավարևելյան ուղղությամբ՝ 2 տանկ»[1],- գրեց հայկական կողմը, որին հետևեցին ադրբեջանական կողմի ընդհանրական տվյալները՝ «Նախորդ օրվա ընթացքում և անցած գիշեր հայկական կողմը կրել է կենդանի ուժի և զինտեխնիկայի զգալի կորուստներ»՝սեփական կորստյան հավելմամբ. «մարտական գործողությունների ընթացքում զոհվել է Ադրբեջանի ԶՈՒ երեք զինծառայող»[2]:

Օրվա ընթացքում կորուստների մասին հաղորդագրություններով կողմերը հեղեղեցին մեդիադաշտը. կեսօրին ադրբեջանական մամուլը հայտարարեց հայկական զինվորական վերնախավի ոչնչացման մասին[3]. «ոչնչացվել է օկուպացված տարածքներում տեղակայված հայկական կողմի բարձրաստիճան հրամկազմի կենտրոնական հավաքատեղին»[4]: Ըստ հաղորդագրության՝ հարվածային կրակի արդյունքում զոհվել են հայ զինծառայողներ, այդ թվում՝ գեներալներ և գնդապետեր: Պաշտոնական այս հրապարակմանը հետևեց հայկական կողմի պաշտոնական պատասխանը՝ հերքում՝ ապացույցով. հանրային հեռուստաընկերության եթերում հարցազրույց տվեց ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ Մովսես Հակոբյանը, որը, ըստ ադրբեջանական մամուլի, ոչնչացված գեներալիտետի շարքերում պիտի լիներ:

Հայկական կողմը օրվա ընթացքում տարածված մի քանի հաղորդագրություններում հակառակորդի կրած կորուստները ամփոփեց օրվա վերջում. «ՊԲ բոլոր ուղղությունների ստորաբաժանումները ոչ միայն հաջողությամբ իրենց դրսևորեցին դիրքային մարտերում, այլև գրագետ ու նպատակասլաց գործողությունների շնորհիվ ապրիլի 4-ին՝ ժամը 22:30-ի դրությամբ, գրանցվել՝ հակառակորդի կրած զինտեխնիկայի կորուստները հետևյալն են՝ 11 տանկ, 1 ՀՄՄ, 4 անօդաչու թռչող սարք և 2 ավտոտեխնիկա, տասնյակների հասնող կենդանի ուժ»[5]: Ապրիլի 5-ի առավոտյան Trend.az-ը հանդես եկավ «Ադրբեջանի ԶՈՒ-ն հակառակորդի կենդանի ուժից ոչնչացրել է 70 մարդ և 20 միավոր տեխնիկա»[6] հրապարակմամբ՝ միաժամանակ նշելով սեփական կորուստները՝ 16 զինծառայող: Այս հրապարակմանը հետևում է ամփոփ վիճակագրություն. «Մարտական գործողությունների ընթացքում ոչնչացվել են հայկական ԶՈՒ-ի 5 տանկ, 15 հրետանային կայան և ինժեներական կցակառույց, ավելի քան 100 զինծառայող: Զոհվել է Ադրբեջանի ԶՈՒ-ի 16 զինծառայող, խոցվել Մи-24 ուղղաթիռ, վնասվել մեկ տանկ»:

---

[1] *http://nkrmil.am/news/view/184*
[2] *https://haqqin.az/news/67274*
[3] *https://www.youtube.com/watch?v=6aE5CLq9ybs*
[4] *https://www.trend.az/azerbaijan/karabakh/2514294.html*
[5] *http://nkrmil.am/news/view/182*
[6] *https://www.trend.az/azerbaijan/karabakh/2514869.html*

Համապատասխան ժամանակահատվածում և դրան հաջորդած օրերին տարածված հաղորդագրություններում, սակայն, այս մասին ոչ մի տեղեկության չհանդիպեցինք ԱՀ ՊՆ մամուլի ծառայության հաղորդագրություններում: Նշյալ հաղորդման մեջ տեղեկատվական խեղաթյուրում կա ադրբեջանական կողմի զոհերի վերաբերյալ (մասնավորապես պաշտոնական աղբյուրներում նշված վիճակագրության առումով):

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ապրիլյան ռազմագործողությունների օրերին արցախյան և ադրբեջանական պաշտոնական հրապարակումները՝ իբրև կողմերի տեղեկատվական քաղաքականության իրացման միջոց, առանձնացրել ենք մի քանի դիտարկումներ: Չնայած հակամարտության կողմերը չունեն տեղեկատվական քաղաքականությունն ուղենշող փաստաթուղթ, այնումանենայնիվ հաջողել են մամուլի հաղորդագրությունների բովանդակությունը ծառայեցնել երկրի շահերից բխող քարոզչությանը: Հայկական կողմի պարագայում՝ առավել ևս, քանի որ տեղեկատվական պատերազմի բովանդակությունն ու գործիքակազմի ընտրությունը էականորեն տարբերվում էր:

Գրականություն

1. Попов В.Д., Информациология и информационная политика. М., 2001.
2. Шпенглер О., Закат Европы, том 2, М. 1998.

Էլ. ռեսուրսներ

- http://nkrmil.am/
- https://razm.info
- https://artsakhpress.am
- https://www.youtube.com
- https://haqqin.az/
- https://www.trend.az
- http://www.vesti.az

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Ա. Խանյանը: